# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզի «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (11 դասաժամ), մաթեմատիկայի (8դասաժամ), ֆիզկուլտուրայի (16 դասաժամ),քիմիայի (9դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա-վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւյուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝- դիմում (Ձեւ 1), մեկլուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակն երը համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**
Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Շիրակի մարզի Քեթիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Քեթի, փ. 3, փակուղի 5, շ. 6:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 13-99-50 հեռախոսահամարով:

«Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝_________ Ղևոնդ Հովհաննիսյան